

# «ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ»



Թրփանձեան գյուղական համայնքների զարգացման ծրագիր

➤ Դուք բժիշկ եք կամ առողջապահության ոլորտի այլ մասնագետ:

➤ Դուք կլինիկական օրդինատուրայի ուսանող եք:

➤ Դուք ցանկանո՞ւմ եք հիմնել կամ ընդլայնել Ձեր մասնավոր առողջապահական ծառայությունը Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կամ Ջավախքի գյուղական համայնքներից կամ մարզային փոքր քաղաքներից որևէ մեկում:

Եթե ԱՅՈՒ,

ապա Հայաստանի ամերիկյան համալսարանի «Ձեռներեցներ առողջապահության ոլորտում» ծրագրի առաջարկած հնարավորությունը հենց Ձեզ համար է:



## «ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ» ծրագիր

➤ **Ծրագրի նպատակը՝**

Բարձրացնել որակյալ բուժօգնության հասանելիությունը ՀՀ գյուղական համայնքներում և մարզային փոքր քաղաքներում՝ առողջապահության ոլորտում նոր մասնավոր կենտրոններ հիմնելու կամ գործող կենտրոններն ընդլայնելու միջոցով:

➤ **Ովքե՞ր կարող են դիմել**

- Բժիշկներ
- Կլինիկական օրդինատուրայի ուսանողներ
- Առողջապահության ոլորտի այլ մասնագետներ
- Առողջապահական ծառայություններ տրամադրող կամ տրամադրել ցանկացող անհատներ

Երևանի գրասենյակ  
Հայաստանի ամերիկյան համալսարան  
Թրփանձեան Հանրային  
առողջապահության ֆակուլտետ,  
436W սենյակ  
Բաղրամյան 40, Երևան 0019, ՀՀ  
Հեռ: (+374 60) 61 25 61  
(+374 55) 05 01 64  
Էլ. փոստ: [eih.trdp@aua.am](mailto:eih.trdp@aua.am)

Գյումրիի գրասենյակ  
Գյումրի տեխնոպարկ,  
Գայի փ.1, 303 սենյակ, Գյումրի 3105, ՀՀ  
Հեռ: (+374 091) 01 27 98  
Իջևանի գրասենյակ  
Վասիլյան փ, 2/1, Իջևան 4001, ՀՀ  
Հեռ: (+374 60) 61 23 01  
Եղեգնաձորի գրասենյակ  
Մոմիկի փ. 5, Եղեգնաձոր 3601, ՀՀ  
Հեռ: (+374 60) 61 23 05

Ստեփանակերտի գրասենյակ  
Գրիգոր Լուսավորիչ փ 8/42, Ստեփանակերտ  
375000, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն  
Հեռ: (+374 479) 7 40 58  
Ջավախքի գրասենյակ  
Ճավճավաձե փ 21, Նինոծմինդա  
Սամթիե-Ջավախքի 3400, Վրաստանի  
Հանրապետություն  
Հեռ: (+995 361) 22 26 56  
<http://trdp.aua.am/>

➤ **Ծրագրի հիմնական բաղադրիչները՝**

- ՀԱՀ կողմից ապագա ձեռներեցների համար դասընթացների մատուցում
- Տարեկան 6% տոկոսադրույքով վարկ ստանալու հնարավորություն
- Շարունակական մասնագիտական աջակցություն և խորհրդատվություն
- Համագործակցություն սփյուռքի համապատասխան մասնագետների հետ
- Մասնավոր կենտրոնի վարման և որակի ապահովման մշտադիտարկում և գնահատում
- Հեռավոր և սահմանամերձ գյուղերից դիմորդներին լրացուցիչ աջակցություն

➤ **Դիմելու ընթացակարգը՝**

- Այցելեք Թրփանձեան գյուղական համայնքների զարգացման ծրագրի ցանկացած գրասենյակ
- Լրացրեք դիմումը և հանձնեք գրասենյակի աշխատակցին
- Եթե Ձեր գաղափարն իրատեսական է, ապա Ձեզ կիրավիրեն մասնակցելու ձեռներեցության և բուժօժանությունների որակի ապահովման դասընթացների\*
- Դասընթացներն ավարտելուց հետո, դուք գնահատող հանձնաժողովին կներկայացնեք Ձեր բիզնես և որակի ապահովման ծրագրերը
- Գնահատող հանձնաժողովի կողմից լավագույն գնահատականի արժանացած ծրագրերը վարկավորում և մասնագիտական աջակցություն կստանան

\*Դասընթացներն անցկացվում են անվճար հիմունքներով



Թրփանձեան գյուղական համայնքների զարգացման ծրագրի աջակցությամբ արդեն ստեղծվել է

- **354** բիզնես
- **580** աշխատատեղ
- **1168** անհատ ավարտել է ձեռնարկատիրական դասընթացներ\*

\* Վերջին թարմացումը՝ հոկտեմբեր, 2017